ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/2-3

ք. Երևան «23» դեկտեմբեր 2020թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վահան Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մնացական Նիկողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N1 և NN 1.1-1.3 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 և NN 1.1-1.3 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և NN 1.1-1.3 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 և NN 1.1-1.3 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N1 և NN 1.1-1.3 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 2 300 000 (երկու միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Սույն պայմանագրի հավելվածներ NN 1.1-1.3-ում գները ներկայացված են վերոնշյալ բանաձևի կիրառմամբ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 և NN 1.1-1.3 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

---

[21] *Քանի որ պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Քանի որ պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	ք.Երևան, Թբիլիսյան խճ 20
Կառավարական տուն 1	Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 193004674290
Հ/Հ 900011022085	ՀՎՀՀ 00840437
ՀՎՀՀ 02505554	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«23» «12» 2020թ. կնքված
ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/2-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
11	50111130/554	11.Հյունդայի Գենեսիս 2009 ա/մ վերանորոգման ծառայություն՝ համաձայն հավելված N1.1	դրամ	400000	1	Ք.Երևան, ծառայությունը մատուցողի նշված հասցեում, հանձնարարելով պատվիրատուի հետ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը
14	50111130/557	14.Հյունդայի Էլանտրա 2015 ա/մ վերանորոգման ծառայություն՝ համաձայն հավելված N1.1	դրամ	300000	1		
17	50111130/560	17.Հյունդայի Քաունթի 2011-2012 ա/մ վերանորոգման ծառայություն՝ համաձայն հավելված N1.2	դրամ	1200000	1		
25	50111130/571	25.Հյունդայի H1 2010 ա/մ վերանորոգման ծառայություն՝ համաձայն հավելված N1.3	դրամ	400000	1		

*Ծառայությունները կմատուցվեն ըստ Պատվիրատուի պահանջի՝ Կատարողին պահանջի ծագման մասին տեղեկացնելու պահից 2 օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման ծառայության և առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ է սահմանվում:

**Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:

***Պարտադիր պայման է՝ ընթացիկ նորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի առկայությունը, ինչպես նաև դրանց չօգտագործված լինելը սպասարկման կետում:

****Տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում:

***** Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց:

******Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի ամբարձիչներով (домкрат)՝ առնվազն 3.5 տոննա բարձրացնելու կարողությամբ:

Ծառայությունների միավոր գները հաշվարկված են սույն Պայմանագրի 4.2 կետով սահմանված բանաձևի համաձայն և ներկայացված են հավելվածներ NN 1.1-1.3-ում:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք.Երևան, Թբիլիսյան խճ 20
Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ 193004674290
ՀՎՀՀ 00840437

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«23» «12» 2020թ. կնքված
ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/2-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդա-մենը
11	50111130/554	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ													
14	50111130/557	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ													
17	50111130/560	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ													
25	50111130/571	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ													

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
** Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք.Երևան, Թբիլիսյան խճ 20
Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ 193004674290
ՀՎՀՀ 00840437

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«23» «12» 2020թ. կնքված
ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-21/2-3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«23» «12» 2020թ. կնքված
ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-21/2-3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N
«23» «12» 2020 թ. կնքվ
ՀՀՎԱ- ԳՀԾՁԲ-21/2-3 ծածկագրով պայմանագ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գներ**

ՀՀ դրա

Հ/Հ	Ընթացիկ,միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Չ/Բ 11 Հյունդայի Գենեսիս 2009	Չ/Բ 14 Հյունդայի Էլանտրա 201
1	2	11	14
1	Բռնկման համակարգի ստուգում	4,410	2,487
2	Կցորդման համակարգի ստուգում	4,410	2,487
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	4,410	2,487
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	4,410	2,487
5	Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում	4,410	2,487
6	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	4,410	2,487
	1.Շարժիչ	0	0
7	Շարժիչի հանում և տեղադրում	105,841	32,335
8	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	70,560	39,796
9	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	84,673	29,847
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	35,280	14,924
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	15,876	8,954
12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	37,044	17,908
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	882	497
14	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	882	497
15	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	882	497
16	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	5,292	2,985
17	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	37,044	14,924
18	Ծնկաձև լիսեռի հղկում	15,876	8,954
19	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	1,058	597
20	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	52,920	2,985
21	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	14,112	597
22	Ծնկաձև լիսեռի ուղղում	8,820	4,975
23	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	12,348	4,776
24	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	15,876	2,985
25	Շարժիչի բլոկի փոխարինում	44,100	24,873
26	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	35,280	19,898
27	Մխոցի փոխարինում 1 հատ	1,058	597
28	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,117	1,194
29	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	882	497
30	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	882	497
31	Փոկանիվի փոխարինում	882	497
32	Շարժիչի շղթայի փոխարինում	22,050	8,954
33	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	10,584	5,969
34	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	1,058	597
35	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	1,058	597
36	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	10,584	5,969
37	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	5,292	2,985
38	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	1,323	746
39	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	1,323	746
40	Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում	1,058	597
41	Յուղի ծորակի փոխարինում	1,323	746
42	Օդաքաշակ փողրակի փոխարինում	1,058	597

1	2	11	14
43	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	21,168	8,954
44	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	3,175	1,791
45	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,117	1,194
46	Թափանիվի առանցքակալի փոխարինում	1,058	597
47	Շարժիչի կափույրի փոխարինում	1,058	597
48	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	1,058	597
49	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	1,058	597
50	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	1,058	597
51	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	1,058	597
52	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	1,058	597
53	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	6,350	2,985
54	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	3,175	1,791
55	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	1,058	597
56	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	5,292	2,985
57	Շարժիչի յուղի արանքաչափիչի (щуп) իրանի փոխարինում	1,058	597
58	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	4,234	2,388
59	Շարժիչի գամասեղի փոխարինում	2,117	1,194
60	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	2,117	1,194
61	Գլխիկի հեղույսի փոխարինում	2,117	1,194
62	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	2,117	1,194
63	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	2,117	1,194
64	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	2,117	1,194
65	Շարժիչի քիմիական լվացում ընդհանուր	5,292	2,985
66	Բաշխիչ լիսեռի նորոգում /վռանի տեղադրում/	1,058	597
67	Ծնկաձև լիսեռի կարգավորող տափոդակի տեղի նորոգում	1,058	597
68	Կափյուրների հղկում 1 հատը	1,058	597
69	Կափյուրի բնիկի նորոգում /գնեզդը/	1,058	597
70	Պարագիտ լիսեռի հղկում և վռանի տեղադրում	1,058	597
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
71	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1,058	597
72	Ավտոմեքենայի հանգույցների յուղում	1,058	597
73	Համակարգչային ախտորոշում	4,410	2,487
74	Յուղի ռադիատորի փոխարինում	3,175	1,791
75	Յուղի ռադիատորի նորոգում	1,058	597
76	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	1,058	597
77	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	5,292	2,985
78	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	10,584	2,985
79	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	2,117	1,194
80	Օդի զտիչի փոխարինում	1,058	597
81	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3,175	1,791
82	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,058	597
83	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	1,058	597
84	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	2,117	1,194
85	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	22,050	8,954
86	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	1,058	597
87	Բենզամղիչի փոխարինում	8,467	4,776
88	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	5,292	2,985
89	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,292	2,985
90	Բռնկման կարգավորում	5,292	2,985
91	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,292	2,985
92	Ղեկավարման բլոկի վերանորոգում	13,230	7,462
93	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,292	2,985

1	2	11	14
94	Վառելիքի բաքի մաքրում	882	497
95	Օդի ծախսի տվիչի փոխարինում	3,175	1,791
96	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	3,175	1,791
97	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	3,175	1,791
98	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	1,058	597
99	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	1,058	597
100	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	3,175	1,791
101	Տվիչի փոխարինում	3,175	1,791
102	Ակսիլատորի փոխարինում կամ նորոգում	3,175	1,791
103	Օդագտիչի իրանի փոխարինում	1,058	597
104	Էլ.բենզոմղիչի կախոցի փոխարինում	1,764	995
	3. Սառեցման և արտածման համակարգ		
105	Հովհարի փոխարինում	5,292	2,985
106	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	882	497
107	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	21,168	8,954
108	Ռադիատորի նորոգում	42,336	23,878
109	Շերտափեղկի փոխարինում	1,764	995
110	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	1,764	995
111	Ընդարձակող բաքի փոխարինում	1,058	597
112	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	2,117	1,194
113	Ջրի ծորակի փոխարինում	1,764	995
114	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	3,175	1,791
115	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,058	597
116	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	15,876	8,954
117	Վառարանի ռադիատորի նորոգում	8,467	5,969
118	Վառարանի շարժիչի փոխարինում	3,175	1,791
119	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	3,175	1,791
120	Ջեռուցիչի անջատիչի պլատայի նորոգում	88	50
121	Ջեռուցիչի անջատիչի պլատայի փոխարինում	3,175	1,791
122	Ջեռուցիչի իրանի փոխարինում	3,175	1,791
123	Թերմոստատի փոխարինում	12,701	5,969
124	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	21,168	8,954
125	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	3,175	1,791
126	Գեներատորի փոկի փոխարինում	4,234	2,388
127	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	4,234	2,388
128	Ջրի ռադիատորի վերանորոգում	39,690	22,385
129	Թերմոստատի միջադիրի փոխարինում	3,175	1,791
130	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,058	597
131	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	1,058	597
132	Խլարարի անուրի (хамут) փոխարինում	1,058	597
133	Խլարարի ներդիրի փոխարինում	2,117	1,194
134	Խլարարի կախոցի փոխարինում	1,058	597
135	Հովացման հեղուկի փոխարինում	4,234	1,791
136	Դիֆուզորի փոխարինում	3,175	1,791
137	Կոնդիցիոների լիցքավորում	5,292	2,985
138	Կոնդիցիոների յուղի ավելացում	1,058	597
139	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում	5,292	2,985
140	Կոնդիցիոների ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2,117	1,194
141	Կոնդիցիոների առանցքակալի հանում և տեղադրում	4,234	2,388
142	Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում	8,467	4,776
143	Կոնդիցիոների կայունակի հանում և տեղադրում	3,175	1,791
	4. Կցորդում և ՓՏ		
144	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում		4,975
145	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	132,301	74,618